

ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

Ե. - ԺԵ. ԴԱՐ

Հայ ժողովուրդն էլ, ինչպէս միւս արեւելիան ժողովուրդները, ունի իր իւրայատուկ երաժշտութիւնը, որի հիմքում կայ իւրայատուկ ձախաշարերի մի խումբ, որով մեր երաժշտութիւնը (աշխարհիկ թէ հոգեւոր) տարրերում է միւս ժողովուրդների երաժշտութիւնց: Դիմախատաքար առակախին լիովին չի ուսումնասիրուած մեր պահարհիկ և հոգեւոր երաժշտութեան լաղային կառուցուածքը: Կոմիտաս Վարդապետն փորձել է զերականնենի դրանք, սակայն նրան սպասիչ կերպով չի յաջողուել անել այդ, որովհետեւ մեր Միջնադարեան խաղերի խորհրդաւոր իմաստը տակափն չի լուսաբանուել: Մի գուցչ մեծ Վարդապետին բաջնողուէք յայսնաբերել խաղերի թագուն իմաստը և հրապարակել, դարձնելով այն մեր ժողովրդի ռեփականութիւնը, եթէ նրան յիմանակուէր իր կենացի վերջուած եղերական մի վախճան: Սակայն հակառակ դրան, Կոմիտաս Վարդապետն անզնահատելի ծառայութիւն է մատուցել մեր ազգային երաժշտութեան բնագաւառում՝ լուսաբանելով մեր ազգային երաժշտութիւնը:

Պէտք է ասել որ մեր հոգեւոր երաժշտութիւնը աւելի պահպանողական է եղել. այսօր մեզ հասել են ութ Զայեները (կամ ձայնաշարերը, որովհետեւ իւրաքանչիւր Զայն ունի իր դարձուածքը, որ տարրերում է բուն Զայնից), որոնց հիման վրայ գաղափար ենք կազմում նաև մեր ժողովրդական երաժշտութեան ձայնաշարերի մասին, որովհետեւ, ինչպէս Կոմիտաս Վարդապետն է ասում, մեր հոգեւոր եւ աշխարհիկ երաժշտութիւնը բոյլ-եղբայր են. այդ երեւում է մանաւանդ լաղային սիստեմում:

Որպէս եղրակացութիւն պէտք է ասել որ հայկական եկեղեցական երաժշտութիւնը, սկսելով Ե. Դարից և խաղային նոտագրութիւնը՝ Ը. Դարից, իրենց զարդացման ուղին են ապրել մեր երաժշտական ներքին օրինացափութիւնների հիման վրայ: Ուստի բնաւ պէտք չէ մեր խաղերի բանալին փինտուել օտարների խաղային սիստեմում, այլ պէտք է հետազոտել՝ ենելով մեր ազգային երաժշտութեան ներքին օրինացափութիւններից:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՒԴ

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ս. Սահակ Պարթեւ Կաթողիկոս եւ Ս. Մերրու մեր զարականութեան ստեղծման երկու մեծագոյն դէմքերն են:

Ե. Դարում մենք ապրում էինք մեր Անկերար՝ չնորհիւ մեր երիցս երանեած ուուրք հայրերի և վարդապետների: Այդ շրջանում հոգեւորականութիւնը ամենէն աղեցիկ զասակարգն էր համարւած: Նրանց ձեռքում էին գիրց, դարականութիւնը, արուեստը եւ նոյնիսկ պետական բարձր պաշտօնները: Մինչեւ անզամ թագաւորը

դժուարանում էր մերժել կաթողիկոսի առաջարկները: Հոգեւորականները այդ ԱՌաջանում եւ կրօնական դործիչներ էին, եւ զրականագէտներ, եւ արուեստագէտներ, եւ երաժշտներ, եւ երգասացներ: Մի խօսքով, նրանք ծանօթ էին իրենց ժամանակի արուեստի բոլոր բնագաւառներին եւ բազմակողմանի զարդացում ունեցող անձնառութիւններ էին: Այդ շրջանի ամենէն փայլուն դէմքն է Ս. Սահակ Հայրապետ:

Ս. Սահակ Մեծն ներսէսի որդին էր:

նուուլ է Կեսարիայում 348 թուի Սեպտեմբեր 29-ին^(*): Եր կրթութիւնը ստացել է նախ Կեսարիայում, ապա կատարելագործուել՝ Բիզանդիայում: Շատ լաւ տիրապետում է հելլէն լեզուի գարութեան եւ փիլիսոփայութեան: Ղաղաք Փարագեցին ասում է. «Յոյժ առցեալ անցուցանէր վարդիւք զրադում զիտնովքն Յունաց եղեալ կատարելապէս հմուտ երդողական տառիցն եւ Հոետորական յորդասաց յայտնաբերութեան. եւս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւր»:

Ա. Սահակ ամուսնանում է մօտ 22 առարկան հասակում: Նրա ամուսնու անունը յայտնի չէ, ոչ էլ ազգատունքը: Նրանք, ովքեր նուշան են կոչում, պարզ մի ենթազդութիւն են անում: Ս. Սահակ ունենում է մի աղջիկ զաւակ, անունը զնում է Սահականուշ, որը յետոյ մայրն է դառնում Վարդիկունանի: Նա արու զաւակ չի ունեցել, արդ կապակցութեամբ նա մտասնդուել է. «Խորհուրդը անմիջաբեր նեղէին դիս, անդադար զմտաւ ածելով եւ ապաչերպ դրաբերական չնորհել ինձ արու որդի»:

Վազ հասակից, հաւանաբար կնոջ մահից յետոյ, նուիրում է Հոգեւոր կեանքին, դառնում վանական: Բարդամիւ աշակերտներ հաւաքելով, աշակերտ վաթսուն բատ նմանութեան Ապուդէից^(**), սովորեցնում է նրանց գիտութիւն, յընելով Հայրենի մեծ քաղաքներում եւ չիներում:

Կաթողիկոս է ընտրում վանական աստիճանից, որպէս ժամանակի ամենազարդացած, լրսամիտ ու Հայրենասէր մարդկանցից մէկը, մանաւանդ լինելով լուսաւորչի տան վերջին շառաւիդր: Հայրապետական աթոռի վրայ է մնում մօտ յիսուն երկու տարիներ: Կրում է շատ վիշտ ու գտառապանք, այնուաժենային տարում է նաեւ միմիթարական օրեր: Խորենացին նրա մասին դրում է. «Մահկանացու ծնեալ անձան գիւրն յիշաւատ եթող»: Ս. Սահակ մեր գրականութեան հմբնադիրն է, ինչպէս նաեւ առաջին շարականադիրը եւ երա-

ժիշտը մեր եկեղեցական երաժշտութեան մէջ:

Գրերի դիւտից յետոյ նրա ուսերին էր ծանրանում Աստուածանչի թարգմանութեան մեծ դործը: Նստած Վաղարշապատում, մի խումբ յունացէտ եւ ասորագէտ աշակերտների հետ, որոնք սովորել էին Եղիսաբեյում և Բիզանդիայում, վերաթարգմանութեամբ սրբագրում էին եւ ամրողացնում Աստուածանչի թարգմանութիւնը: Գրերի դիւտից անմիջապէս յետոյ, փորձի համար, Մեսորպ Մաշտոցը, Եղիսկ Կողրացին, Յովսէփ Կաղնացին եւ ուրիշներ Աստաւածանչի ասորերէն թարգմանութիւնից կատարում են մի քանի դրերի թարգմանութիւններ, որոնց թւում եւ Առակաց Գիրուքը: Թարգմանչաց օրով գոյութիւն ունէր Հին Կոտակարանի Երկու թորգմանութիւն՝ տոռական, որ կոչում էր «Ենդիշի», իսկ Երկորորդը յունական, որը կոչում էր «Եօսթանանից» թարգմանութիւն (որովհետեւ բատ աւանդութեան 70 յունացէտ եւ երրայրական հատկանի հարաց կուտայտայի համար հրեայ ուստի նորիներ Հին Կոտակարանը երրայրեցից թարգմանում են յունարէնի Ն. Ք. Դարում»:

Արդ, երբ 432 թուին, Եփսոսի ժողովից մի տարի յետոյ, թարգմանիչ վարդապետներ Կ. Պոյսից Վաղարշապատ են բերում Աստուածանչի մի ընտիր յունարէն Բարգմանանութիւն որպէս նուէր Հայոց կաթողիկոսին՝ ունաց գոյութիւն եւ պատրիարքի կողմէց: Ս. Սահակ այս ընտիր օրինակի ժրաւ յից սրբագրում է Հին թարգմանութիւնը եւ թարգմանում նախապէս չթարգմանուած դրերը:

Աստուածանչի թարգմանութիւնը վերջանում է 436 թուին: Թարգմանութիւնը լինում է Հոյակապ: Բազմաթիւ գիտնականներ զրացուելի են Աստուածանչի տարբեր լեզուներով թարգմանութիւնների ուսումնասիրութեամբ և Հայերէն թարգմանութիւնը Համարում են աթենարանտիր, թագուհի թարգմանութեանց: Աստուածանչի թարգմանութեան հուութեան կարգի մէջ, Հայկականը դրերու հօթերորդ տեղու:

Համ Կորինի վկայութեան, Ս. Սահակ թարգմանում է Եկեղեցական մի ժումարութիւն (շատ զբար): Բացի թարգմանական աշխատանքից, Ս. Սահակը դրել է

(*) Օրմանեան, Ազգագույնական:

** Այսինքն ծրագան կրօնաւոր:

նաեւ դաւանարանական թղթեր կ. Պոլոսյ Պրոկտ պատրիարքին, յունաց կայսրին եւ միշտ շարք յոյն յայտնի եպիսկոպոսների : Ս. Սահակը գրել է նաեւ ազօթքներ եւ քարոզներ : Երան անոնով մեզ հասել են 55 կանոններ : Այս կանոնների միջոցով կաթողիկոսի նպատակն է եղել բարեկարգել եկեղեցական կեանքն . նրանք չառ հստագրքիր են իրենց ձեւու ի եւ բովանդակութեամբ : Այդ կանոններում արտացոյուել է հայ ժողովրդի կենցադր, վարդին ու բարքի, Հոգեւորականութեան նկարագիրը եւայլն : Օրինակ՝ արգելում է շահի, զամանի համար ժամկահասակներին ամուսնացնել, պայման է դնում ամուսնութեան մէջ նկատի ունենալ երկու կողմերի յօժարութիւնը :

Գրականութեան հիմնադիր կաթողիկոսը, ժառացած, տղէտ քահանաների մասին դրում է . «Զի ասացին թէ ինքեանք չեն ուսեալ եւ ոչ զորդիս իւրեանց ի գալրոց ունին : ... Արդ բարձէք այսուեետեւ ի ձենջ զայսպիսի թշնաման», զորդիս ի գալրոց կալարիւք, զի զիառւն լիցին : Խաներուք, զի որպէս կուրութիւն աչաց ատելի է մարմնոյ, նոյնպէս եւ տղիսութիւն ողույ՝ ատելի է Աստուծոյ» :

Ս. Սահակ գրել է նաեւ բազմաթիւ շարականներ, յատկապիս Աւագ Շարաթի շարականները՝ «Պարզեւատում Ամենաեցում, Ալրծաթիրութեամբ», «Ըմասատում Կուսանք», «Այսօր Կանոննեցաւ եւայլն : Ս. Սահակին են բնծարում նաեւ Մաշտոցում դաւանող քահանաթագաման եւ ձեռնադրութեան ազօթքները :

Ս. Սահակ վախճանուեց 439 թուականին, աւելոր հասակում եւ թաղուց Աշխիշտառում : Նա մեր առաջին երախտաշատ հայրապետն է :

Վերեւում նշեցինք թէ Ս. Սահակին են մերադրում Աւագ Շարաթի շարականները : Մրանք, թէ իրենց ձեւով եւ թէ բովանդակութեամբ յերին առաջնանի պարզ են : Դրանք Աւետարանի պատմութիւնների ամփոփումն են, յաճախ Աւետարանի բուն իսկ բառերով : Այսուեղ Հեղինակը կամ երգիչը մի նպատակ ունի : Երգի միջոցով սովորելու դեմք է հորով է լցուած առ Տէր եւ լի է սրտամութեամբ՝ «անօրէն» եւ ապերախտ աշակերտի դէմ : Նա ասում է :

նեցաւ», «Ալրծաթսիրութեամբ», «Ժիշերին Յորում» եւ «Ուգ Սքանչելի», որոնք իրենց միանման պարզութեամբ, դդացմունքի խորութեամբ եւ վիպականութեամբ մի երգի դործ են երիւում եւ կազմում են մի սարցութիւն : Դրանք յօրինուած են ժամերգութեան այն ժամի համար, որ ամենաշին ժամանակներից դրաւել է քրիստոնեայ ժողովրդի սիրտն ու հոգին : Դա Աւագ Ռւրուաթի կիշերային ժամն է՝ Յիսուսի վերջին օրիւր, Ունլուայից մինչև Թաղում : Մեծի Աւրամիթի հակման տանին Աւետարան կարգարած սովորութիւնը չին է . չըստ Աւետարանինների ամէն մի բնթերցուածից յետոյ՝ ժամանուրուններն իրենց զգացմունքն եւ արտայալու երգելոյ արդ երգերը, եւ մի քանի կար : աների մէջ կրկնելոյ կարդացուած Աւետարանի բովանդակութիւնը : Հենց այս պատմառով շարականների ոնն ու բովանդակութիւնը շատ պարզ է : Պատմում է թէ ինչպէս Տէրը խոնարհւում է եւ լուանում աշակերտների սոները՝ յայտնելով որ նրանցից մէկը իրեն պիտի մատնի : Աշակերտները իսխան յուզուում են եւ ուրում են իրանալ թէ ո՞վ է մատնողը : Դա Յուղան է, որ երեսուն արծաթի փոխարք հանդիպությունը մատնում է իր գարզապետին, մինչ նա ազօթում էր Զիթենեաց Լերան վրայ : Այս պարզ բայց շատ սրտայոյդ պատմութեան մէջ Հեղինակը մէծ սիրով է լցուած առ Տէր եւ լի է սրտամութեամբ՝ «անօրէն» եւ ապերախտ աշակերտի դէմ : Նա ասում է :

Ով եամբայր նենգարեան,
Նշան եւ տակիք մահու . . .

Եւ ապա զայրացած նկարագրում է Հանօրէնքնեւն :

Մերկացաւ յինքնենիկ
ԶԱստաւածային սուրբ հոգին
Եւ զգեցաւ զատանայ,
Որպէս հանդերձ արկան գիւրեաւ :

Հնյակապ պարզութեամբ նկարագրում է նաեւ խաչելութեան պահը, երբ հրեանները ժի խաչ հան զգաւ էին գոչում .

Ով սժաննենի
Եւ տեսիլ ահաւոր .

Զարարիշն երկնի եւ երկրի
Այսօր տեսաք ի խաչի:
Տեսնալ զծէրն ի խաչին՝
Խուարեցա արեգակն,
Եւ վարազըր Տամարին
Ցելայր վերուստ մինչ ի Վայր:

Մինչեւ այսօր էլ այս խորհրդաւոր արա-
րողութիւնը պահուած է մեր եկեղեցում,
Եւ կատարուած է Աւագ Ռւբրութ օր, գիշեր-
ւայ ժամը 12-ին:

Հոյակապ պատկեր է Տէրը խաչի վրայ,
«սպանչելի եւ ահաւոր»: Հեղինակի հոգեկան

Ընդ որում եւ համբաւիցից
Ան զնա կալարիւք
Ով համբոյր նննգուրեամ
Նշան եւ առիք մահու

ոլացը շատ ուժեղ է: մի կողմից սքանչա-
նում, հիանում է խաչելութեան այդ հոյա-
կապ տեսարանի վրայ, իր Տէրոջ տեսնելով
փառաւորուած, առկայն միւս կողմից շա-
հաւորը է թում, որովհետեւ իր Տէրն ու
Աստուածն է տեսնում խաչի վրայ, ա-
նարգուած ու լքուած:

Որքան միակերպ են այս տիպի երդերի
Եւ ուսանաւորների բովանդակութիւնն ու
արայայսութիւնն մեւերը, նոյնքան աւելի
բազմազան են նրանց մէջ գործնական ուսա-
նաւորի չափերը. օրինակ՝

= 4 ուժ, 8 վանկ
= 4 ուժ, 7 վանկ
= 3 ուժ, 6 վանկ
= 4 ուժ, 7 վանկ

Կամ՝

Ով սփանչելի
Եւ տեսիլ անաւոր
Զարարին երկնի եւ երկրի
Այսօր տեսաք ի խաչին

= 1+4 ուժ, 5 վանկ
= 3 ուժ, 6 վանկ
= 4 ուժ, 8 վանկ
= 4+3 ուժ, 7 վանկ

Տեսնում ենք որ այս փոքրիկ հասուած-
ների մէջ անգամ զանազան չափերի ենք
Հանդիպում:

Պէտք է ասել որ մեր տաղաչափութեամն
ձեւը նման է Սանսկրտերէնի տաղաչափու-
թեան, որը, կարծում է, ծնունդ է տուել
բազմաթիւ լեզուների:

Հայկական տաղաչափութիւնը 16 ոսք
կամ վանկ ունի եւ բաժանուած է չորս ան-
դամների եւ իւրաքանչիւր անդամ բաղկա-
նուած է չորս ոսքեց: Ի տարբերութիւն միւս

լեզուների եւ հենց Սանսկրտերէնի, հայ-
կական տաղաչափութեան մէջ առաջին եւ
երկրորդ անդամների վերջին վանկերի վրայ
չեղանք է դրում, եւ ապա յանգաւորում եւ ե-
րաժշտութիւն է տալիս ուսանաւորին: Սա-
կայն, հետագայում, բանաստեղծութիւնը
աւելի երաժշտական գործներու նպատակով,
չորս-չորս համաչափութիւնը փոխել են եւ
գործածել են նաև երկու-չորս, չորս-երեք,
որը ամենից աւելի երաժշտական է: Օրինակ՝

= 4+3 ուժ, 7 վանկ
= 4+3 ուժ, 7 վանկ

Կամ՝

Որ քարոզեացն զգալուստ
Արքայի Տեսան ի յերկնից

= 4+3 ուժ, 7 վանկ
= 4+3 ուժ, 7 վանկ

Կոմիտաս կաթողիկոսն էլ իր «Անձինք
Նուիրեայք»-ի մէջ գործածուած է զանազան
չափեր, ըստ որում չորս վանկից մինչեւ մէկ
վանկ ունեցող անդամ կայ, եւ 14 վանկից

մինչեւ 8 վանկ. սակայն այս փոփոխութիւն-
ները միայն երաժշտականութեան համար են
գործածուած:

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Հանձարեղ զաւակը Հայ ժողովրդի, ըստ տեղիչը մեր գրերի, Մնուել է Տարօնի Հայեկաց գիւղում, գիւղացու ընտանիքում։

Սուրբ Մեսրոպի վարքը գրել է իր աշակերտ Կորիմը, որը աւելի կանգ է առել ոչ հայ գրերի ստեղծող անմահ Օչականցու վրայ, որքան նրա մեծ ու յաւերժական դործի վրայ։ Նա ստացել է պարսկական, տարրական եւ հելլենական կրթութիւն։

Գործունէութեան առաջին շրջանում ծառայում էր Հայոց արքունիքում՝ Արշակունի թագաւորի գիւղանատան մէջ, որպէս քարտուղար։ Ըստ պատմէին վկայութեան, նա հմուտ էր թէ աշխարհական եւ թէ գինուրական գործերին։

Աւելի հասուն տարիքում Բողոնում է զինուրական ասպարէզը, Հագնում է վանական կնգուղ եւ գառնում վանական քարոզիչ։ Մեսրոպ Մաշտոցի Աւետարանական քարոզութեան առաջին վայրն է Հանդիտանում Գողթան գաւառոր, ուր Շարիթ անունով մի իշխանի օժանդակութեամբ, եւ Տիրայր Խորենացու եւ Մուչէ վարդապետի օջանութեամբ բացում է զպրոց։ Այդ օրերին վանական քարոզիչների վրայ ծանրանում էր երկու պարտականութիւն։ այն է՝ օտար լեզուից թարգմանել Աստուածաշնչը եւ վերծանել ժողովրդին։ Մեսրոպ Մաշտոցը վերծանող էր։ Այս հանգամանքը ստիպում է նրան որ յղանայ Հայերէն գրերի ստեղծման վրկարար միտքը։ Մաշտոցը երկար թափառումներից եւ որոնումներից յետոյ ի խնդիր Հայ գրերի, ուզ ի քուն երազ եւ ոչ յարթութեան ախիլ վիճակում, այսինքն ստեղծագործական երկունքի պահին իր սեփական հանձարով եւ Աստուածային օգնու-

թեամբ ստեղծեց մեր մեծասքանչ լեզուի այրութենը։

Գրերի գիւտից յետոյ Մեսրոպի առաջ բացում է գործունէութեան լայն ասպարէջ. ամէն կողմ բացում են զպրոցներ, յատկապէս ուշադրութիւն է զարձում Գողթան զաւատի լուսաւորութեան վրայ, որտեղ ապրում էր «գագանամիտ վայրենադոյն եւ ճիւղապարոյ» մի ժողովուրդ։ Մաշտոցը ապա անցնում է Վրաց եւ Ազուանից երկները, ինչպէս նաև Յունա-Հայաստան, որտեղ եւս ծաւալուեց առաքելական դրական-մշակութային գործունէութիւն։

Յունա-Հայաստանում ապրող Հայութիւնը կեսարացի յոյն մետրապոլիսների տիուր ջանքերով կանգնել էր վտանգի առաջ։ Յունահայութիւնը դուրս էր մնում Մահակ-Մեսրոպեան շնչի եւ Հայ գրականութեան փրկարար աղղեցութիւնից։ Երիտ մեծ լուսաւորիչները մտահոգուում են այդ մասին։ Մեսրոպ Մաշտոցը Ս. Սահակից յանձնարարական թղթեր վերցրած գնաց Կ. Պոլիս, Վարդան Մամիկոնեանի հետ։ Հայոց պատուիրակութիւնը մեծ պատուով ընդունեց կայսեր եւ պարտիարքի կողմից։ Պատրիարքը Մեսրոպին շնորհեց «Անկումիտ» (գիտուն) տիտղոսը, իսկ կայսրը Վարդանին շնորհեց «Սարագելատ» (սպարապետ) տիտղոսը։

Ս. Մեսրոպ իրաւունք ձեռք բերեց դրաբոցներ բանալու Յունա-Հայաստանում եւ մնաց այստեղ։ Այսպիսով, նորաստեղծ Հայ գիրն ու զրականութիւնը՝ Հայութեան երկուոի բաժանուած մեծ հատուածների միջեւ գարձաւ ազգային միութեան հզօր պատմար։

ԶՈՂԱԿԱ ՄՐԿ. ՇԱՄԼԵԱՆ

(Հար. 6)

